

ցանելոյ մեր եւ մերոց առաջնոցն զերկայնամիտ եւ զբաղցր Աստուած՝ մատնեալ անկաթ ի ստրկութիւն, եւ խոնարհեալք յանարգութիւն՝ անողորմութեամբ գտեալք ի բաժանումն. այլ եւ զգեղեցիկ տեղիս¹ հանգստի² մերոյ եւ բնակութեան տեսաթ ժառանգեալ ամբարիաւաճ եւ անաստուած ազգին Պարսկաց: 7 Վասն որոյ ընտրելագոյն լիցի ինձ թողուլ զանձկալի եւ զամենատենչ վայրս երկրիս³ Այրարատոյ⁴, զբնիկ եւ զսեպհական⁵ տեղիս Նախնեաց իմոց, եւ զնալ զկնի աղթատութեան եւ կեալ բաղձալի կարաւտանաւք՝ քան թէ սիրել զկենցաղս աշխարհիս, զոր իբրեւ թողլոց եմք ակամայ. եւ ընտրել զբնակութիւն մասին այսորիկ՝ քան բնակել անարգանաւք ի մեջ անաւրիկաց եւ կեալ միշտ ցաւաւք մտաց զյերկար եւ կամ զկարճ կեանս անյայտ կենցաղոյս, եւ վախճանել անարգութեամբ, ըստ որում ոչ արժանի⁶ թագաւորական պատուոյ եւ շքեղութեան»:

Է. Եւ խորհելով զայս ամենայն Արշակ թագաւորն ի միտս իւր՝ լքեալ մերժեալ թողոյր զբարի եւ զբնիկ ժառանգութիւն Նախնեաց իւրոց, զգաւառն Այրարատու, զհոյակապն եւ զհռչակաւորն եւ զականաւորն⁷. զամենաբոյսն, զամենաբուրհիսն⁸, զամենալին, զամենագիւտն ի շահս եւ ի դարմանս մարդկային պիտոյիցս կենաց եւ վայելչութեան եւ սթափութեան. զդաշտս մեծատարածս եւ որսալիցս. զլերիսն շուրջանակի գեղեցկանիստս եւ պարարտարաւտս, զհոծեալս Էրեւմքն կճղակաբաժնիւք եւ որոճայնովքն, եւ այլովք եւս բազմաւք ընդ Նոսին: 2 Յորոց ի վերուստ ի կատարացն⁹ չրոց հոսմունք, անկարաւտ ոռոգման արբոցանելով զդաշտս՝ մատակարարե անբաւ բազմութեամբ յոստանն, կանամբք, արամբք եւ ընտանեաւք¹⁰, զանպակասութիւն հացի եւ զինւոյ, զանուշահոտ¹¹ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն եւ զզանազանումն իւղաբուրիս¹² սերմանցն: 3 Իսկ ի լանջակողմանս կամ ի սարահարթ տեղիս սփռեալ¹³, յոր¹⁴ դիպեցուցեալ զհայեցած Նորոգա-

1 SS. տեղի

2 Ձ. Նախ՝ ի հանգստի, ապա՝ առաջին ի-ն ջնջած

3 SS. չիք երկրիս

4 Ձ. այստեղ եւ յետոյ՝ արայրատոյ, արայրատ

5 Ձ. սեփական

6 SS. ըստ որում որ ոչ արժանի. Ձ. ըստ որ ոչ արժանի. որ-ի վերելից գրուած՝ որում

7 Ձ. զյականաւորն

8 Ձ. զամենաբուրիսն. Բտ. զամենաբուրիսն. Գտ. զամենաբուրիսն

9 ՁԱտ. ի կատարածն. այսպէս ըստ ԲԳտ. ուղղագրութեան

10 Ձ. արամբ եւ ընդանեօք

11 Ձ. զանուշահաւ. թուի զանուշահամ

12 Ձ. եւ զանազանութիւն իւղաբուրիս

13 SS. չիք սփռեալ

14 Ձ. զոր